

ԳՈՅԱԿԱՆԻ ԶԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ԱՌԱՆՁՆԱԿԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊԱՐԱՆԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Գ. Գ. ՄԿՐՏՉՅԱՆ

XX դարի հայ լեզվաբանության ձեռքբերումներում, ի թիվս այլ նվաճումների, առանցքային տեղ ունի հայերենի տարածքային միավորների՝ բարբառների ու խոսվածքների ուսումնասիրությունը. աստիճանաբար հետազոտվել են հայերենի գրեթե բոլոր խոսվածքները, որոնց շնորհիվ բարբառները առանձնացվել են միմյանցից և որոշվել են նրանց տարածման սահմանները, կատարվել են հայերենի բարբառների միահատկանիշ և բազմահատկանիշ դասակարգումներ, ճշգրտվել է բարբառների ընդհանուր քանակը, ի հայտ են եկել հայերենի բարբառների ծագման մասին իրարամերժ տեսություններ և այլն: Մինչդեռ համաժամանակյա բարբառագիտության հետազոտությունները հիմնականում սահմանափակվում են առանձին վարչատարածքային միավորներում կենդանի բարբառային իրողությունների առանձնահատկությունների դիտարկմամբ և լեզվական տարաբնույթ հարցերի ուսումնասիրմամբ: Մի այդպիսի փորձ կկատարենք մենք՝ ստորև դիտարկելով գոյականի քերականական կարգերի առանձնահատկությունները Ապարանի տարածաշրջանի՝ բարբառային բազմատարր դրսևորումներ պարունակող խոսվածքներում:

Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանում ապրող բարբառախոսները պատմական Հայաստանի Մուշ, Վան, Ալաշկերտ, Մանազկերտ, Դիաղին, Մակու և բազմաթիվ այլ բնակավայրերից վերաբնակյալներ են¹: Հայերենի բարբառների արևմտյան խմբակցությանը, այսինքն՝ հայերենի բարբառների կը ճյուղին պատկանող այս խոսվածքները, շուրջ երկու հարյուր տարի ապրելով տարածական նոր միջավայրում, զգալի փոփոխություններ են կրել: Լեզվական այդ տեղաշարժերի ու փոփոխությունների պատճառները բազմաթիվ են. բուն ապրելավայրի փոխարինումն այլ բնակության վայրով, նոր հասարակարգի, կենսակերպի կրող դառնալը՝ հին ապրելակերպի աստիճանական մոռացմամբ, տարածական նոր միջավայրում ոչ միատարր բարբառների ու խոսվածքների համատեղ գոյակցությունը, բարբառային ձևերի փոխօգտագործումը, գրական հայերենի համընդհանուր գործառույթների իրացումն ու ազդեցությունը և այլն: Հավելենք նաև, որ սույն հետազոտությունը նախևառաջ հիմնված է Ապարանի տարածաշրջանում ապրող տարեց, միջին և նոր սերնդի բարբառախոսների տրամադրած լեզվական փաստերի վրա, ապա բարբառային այժմյան ձևերը հիմնավորելու ու ճիշտ արտացոլելու համար կենդանի բարբառային իրողությունները համեմատվել են այդ խոսվածքներին վերաբերող հետազոտություններում բերված փաստերի հետ:

¹ Վերջին վարչատարածքային բաժանմամբ Ապարանի տարածաշրջանի մեջ է մտնում Ապարան քաղաքը և հարակից քսան՝ Ափնա, Հարթավան, Քուչակ, Երնջատափ, Նորաշեն, Արայի, Վարդենուտ, Արագած, Ծաղկաշեն, Շենավան, Ջրամբար, Եղիպատրուշ, Մուքի, Վարդենիս, Զորագլուխ, Սարալանջ, Թթուջուր, Չքնաղ, Լուսագյուղ, Նիգավան գյուղերը:

² Տե՛ս «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 1, Եր., 1986, էջ 306:

ԹՎԻ ԲԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԱՌԱՆՅՆԱԿԱՎԻՈՒՅՈՒՄՆԵՐԸ ԱԿԱՐԱՆԻ ԽՈՎԱԾՐԱՆԵՐՈՒՄ: Հայերենի բոլոր դրսևորումներում գոյականի թիվը հանդես է գալիս եզակի և հոգնակի թվերի հակադրությամբ: Եզակի թիվը բառի ելակետային ձևն է, իսկ հոգնակի թիվը բազմաձև է: Համաժամանակյա քննության տեսանկյունից՝ Ապարանի տարածաշրջանի խոսվածքներում հոգնակի թիվը արտահայտվում է հետևյալ ձևայիններով՝ *-էր, -անէր, -ք/ի, -էք/ի, -էրք/ի, -իք/ի, -տիք/ի, -իկ/ք, -վրդիք/ի, -անք/ք, -վրդանք/ի, -րան, -անք/ի, -վրներ, -սպան, -տան:* Հոգնակի թիվ կազմության միօրինակացման բերումով գերակշիռ են *-էր* և *-անէր* մասնիկները¹: Ըստ որի՝ *-էր* են ստանում գրեթե բոլոր միավանկ՝ *տուն>տներ, ծառ>ծառեր, շուն>շներ, շու>շներ, ջաք>ջաքեր* և այլն, իսկ *-անէր*՝ բազմավանկ բառերը՝ *քաղաք>քաղաքներ, յօլք/ի>յօլքներ, կամուրջ>կամրջներ, բրժիշկ>բրժշկներ, օխնար>օխնրներ* և այլն: Բազմաթիվ են և բաղաձայնով վերջացող բազմավանկ բառերի ոչ թե *-անէր*, այլ *-էր* մասնիկ ստանալու գործածությունները, որոնցում փոխազդեցության՝ հնչյունի անկման օրենքով, ընկնում է երկու նույնանման հնչյուններից մեկը՝ *մաշուն>մաշներ, բուսան>բուսներ, չորան>չորներ, աման>ամներ, յեղան>յեղներ* և այլն: Ինչպես գրական արևելահայերենում և արևելյան խմբակցության բարբառներում է, Ապարանի խոսվածքներում ևս գրաբարյան և վերջնահնչյուն ունեցող բառերի հոգնակին կազմելիս և բաղաձայնը վերականգնվում է՝ *շուգ>շրգներ, մուգ>մրգներ, գառ>գառներ, դուռ>դրոներ, բոռն>բոռներ* և այլն: Ըստ գործածության ընդգրկման՝ Ապարանի տարածքային միավորներում գերակշիռ է դասական հայերենում համակարգային *-ք* հոգնակիակերտի գործածությունը², որը ավելանում է հետևյալ երկու՝ *ի* վերջնահնչյուն ունեցող բառախմբերին.

ա) *ի* ձայնավորով վերջացող բառեր՝ *բեռ/ի>բեռիք/ի, թշնամի/ի>թշնամիք/ի, խնամի/ի>խրնամիք/ի, չուրի/ի>չուրիք/ի, մապանի/ի>մադնիք/ի* և այլն:

բ) *-Ացի, -եցի* ածանցներով կազմված բառեր՝ *շաշլեցի/ի>շաշլեցիք/ի, գեղացի/ի>գեղացիք/ի, փանջրլեցի/ի>փանջրլեցիք/ի, քաղաքացի/ի>քաղրըցիք/ի, աբարանցի/ի>աբարանցիք/ի* և այլն:

-Ք հոգնակիակերտ են ստանում նաև *օ* ձայնավորով վերջացող *վեղո* և *կիևօ* նորագույն փոխառությունները՝ *վեղոք/ի, կիևօք/ի*: Մյուս հոգնակիակերտները բաղադրյալ կազմություն ունեն և դրսևորում են հետևյալ առանձնահատկությունները.

ա) *-էք* հոգնակիակերտը ձևավորվել է *ք* հոգնակիակերտից առաջ *այ* երկբարբառի պարզեցմամբ, այսինքն՝ *այ* երկբարբառը պատմականորեն հնչյունափոխվել է *է-ի*: Հնչյունափոխական այս օրինաչափությունից առաջացած *-էք* հոգնակիակերտն են ստանում ա ձայնավորով և յ ձայնորով վերջացող գրաբարյան բառերը՝ *սաղանաչ>սաղանք/ի, տղաչ>տղէք/ի, փեսաչ>փեսէք/ի, էրեխաչ>երեխէք/ի* և այլն: *-էք* մասնիկն են ստանում նաև ա ձայնավորով վերջացող այն բառերը, որոնք ժողովրդախոսակցական լեզվի բառապաշարի տարրեր են և մինչ XX դարը կատարված փոխառություններ՝ *գաբա>գաբէք/ի, ագոս>ագոէք/ի, ճամփա>ճամփէք/ի, բալա>բալէք/ի, բիջա>բիջէք/ի, բուղա>բուղէք/ի, քուչա>քուչէք/ի*

¹ Հայերենի պատմական քերականության մեջ այլևս վիճարկելի չէ այն, որ միջին հայերենում համակարգային դարձած *-եր* մասնիկը ծագել է գրաբարյան *-հար* հոգնակիակերտից՝ ա ձայնավորի տղմամբ, իսկ *-աներ* մասնիկը՝ *-նի* հոգնակիակերտ մասնիկի *ե* *-եր* մասնիկի միացումից՝ *-նի* մասնիկի իմաստի մթագման պատճառով (տես Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, Եր., 1957, էջ 710, Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր., 2006, էջ 246):

² Տես Ա. Աբրահամյան, Գրաբարի ձևաբանություն, Եր., 1958, էջ 22:

և այլն: Լեզվական այս օրենքը՝ որպես համաքանությամբ կատարված իրողություն, նույնիսկ տարածվել է ռուսերենից փոխառված, երկրագործությանը վերաբերող, ա ձայնավորով վերջացող մի քանի բառերի վրա՝ **լապապկա>լապապկեր/կ, կրվառփրա>կրվառփրեր/կ, նասիլգա>նասիլգեր/կ, շանա>շաներ/կ** և այլն: **Չօր** մարմնանվան հոգնակին լինում է **չօրեր/կ**:

բ) **-երք** մասնիկը ավելանում է միայն **փղա>փղերք/կ** և **ախչիկ>ախչիկերք/կ** բառերին: Բաղադրյալ այս մասնիկը կազմված է **-եր** և **-ք** հոգնակիակերտների միացումից և Ապարանի խոսվածքներին է անցել Արարատյան բարբառի խոսվածքների ազդեցությամբ:

գ) **-իք** ձևությամբ կազմվում է **կիճ** և նրանով բաղադրված բառերի հոգնակին՝ **կիճ>կընանիք, քեռնկիճ>քեռնզգիք** և այլն:

դ) **-իկ** մասնիկով, ինչպես գրական հայերենում է, կազմվում է **մարդ** բառի հոգնակին՝ **մարդիկ**, թեև Ապարանի խոսվածքներում **մարդ** բառը ստանում է նաև **-եր** մասնիկը՝ **մարբեր**:

ե) **-դիք** հոգնակիակերտը ավելանում է որոշ ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերի՝ **ընգեր>ընգերդիք/կ, ախպեր>ախպերդիք/կ, փեքեր>փեքերդիք/կ, հոխպեր>հոխպերդիք/կ, կնիգ>կընգերդիք/կ**: Ըստ մեզ՝ բաղադրյալ **-դիք** մասնիկը կազմված է միջին հայերենում գործող **-փի** (Ապարանի խոսվածքներում բառամիջում խուլ տ-ն հնչյունափոխվում է ձայնեղ դ-ի) և գրաբարյան **-ք** մասնիկի ձուլումից:

զ) **-վրդիք** մասնիկը ենթադրելի է, որ կազմված է միջին հայերենում գործածություն ունեցող **-վի** և **-իք** մասնիկներից: Այս մասնիկը ավելանում է միայն **քույր, փալ** գոյականներին՝ **քուր>քուրվրդիք/կ, փալվ>փալվրդիք/կ**:

է) **-ան** մասնիկը, որի ծագումը Հր. Աճառյանը բխեցնում է գրաբարյան **-եան** ձևից¹, և այն վկայություններ ունի դասական հայերենում, Ապարանի խոսվածքներում հոգնակի թիվն արտահայտում է նաև **-անք/կ, -վանք/կ** տարբերակներով: Նշյալ հոգնակիակերտներով կազմվում է բազմաթիվ կենդանանունների հոգնակի թիվը՝ **էջ>իշան>իշանք/կ>իշվանք, չի>ժիան>ժիանք/կ, էջ>իշան>իշանք/կ>իշվանք/կ, գեր>գիլան>գիլանք/կ**:

ը) Հավանաբար **-վի, -փդի, -անք** հոգնակիակերտներից ձևավորված **-վրդանք/կ** մասնիկը ձևավորում է **փեր** բառի հոգնակի թիվը՝ **փեր>փիրվրդանք/կ**: Կա նաև **փիրվրդան** տարբերակը: **Ախպեր** գոյականը ունի **ախպերդանք/կ** կազմությունը և:

թ) **-րան** հոգնակիակերտով կազմվում է հետևյալ բառերի հոգնակին՝ **գօմէջ>գօմջրան, գեր>գեղրան, փեր>փեղրան>փերան**, իսկ **-րանք** մասնիկով՝ **գյուղ** բառի հոգնակին՝ **գեղրանք/կ**: Միաժամանակ գործածելի է **գեղրաներ** ձևը: Ջրամբար գյուղում ապրող Ղարաբաղի բարբառների ներկայացուցիչները **գյուղ** բառի հոգնակի թվի համար ունեն **գեղարանք** կազմությունը:

ժ) **-վրներ** հոգնակիակերտը, որը կազմված է **-վի** և **-ներ** մասնիկներից, հանդիպում է միայն **աչք, ունք, ճուր** բառերի հոգնակին կազմելիս՝ **աչվրներ, ունքվրներ, ճրդվրներ**: Նկատենք, որ Մշո բարբառում **աչք, ուրք, չեք** գոյականները ստանում են **-վի** մասնիկը՝ **օպ/դվի, չեովի, յաչվի**², սակայն այժմ **ուրք** և **չեք** բառերը ունեն **-ներ** հոգնակիակերտը, իսկ **աչք** բառը պահպանել է **-վի** մասնիկի հետքերը՝ ձուլվելով **-ներ** մասնիկին:

¹ Տե՛ս Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 712:
² Տե՛ս Ս. Հ. Բաղդասարյան-Թափալցյան, Մշո բարբառը, Եր., 1958, էջ 77:

ծա) Ապարանի խոսվածքներում -անք հոգնակիակերտով կազմվում է *սկեսրայր* գոյականի հոգնակի թիվը՝ *կեսարք* > *կեսրանք*։

ծբ) Միայն Նիզավանի խոսվածքում է գործում միջինհայերենյան -սպան հոգնակիակերտը՝, որով կազմվում է *ոսկի, գարի, եզդի* գոյականների հոգնակի թիվը՝ *օսկեսպան քոդաչ քուրքերու քով* («ոսկիները թողել են թուրքերի մոտ»), *էզդեսպան դիրաչ մրք սարեր* («Եզդիները փրեել են մեր սարերին»), *յես կարեսպան քովդ էն* («այս գարիները քոնն են»)։

ծգ) Արայիի և Ափնայի խոսվածքներում հանդիպել ենք կիրառության, ըստ որի՝ *չագ* գոյականի հոգնակի թիվը կազմվում է -*պան* մասնիկով, որը նորահայտ հոգնակիակերտ է՝ *չագ չրգպան* («կաղվի չրգպան փախաչ ա»)։

Խոսվածքներում -եր և -ներ մասնիկները այնքան են տարածվել, որ ավելանում են անգամ բաղադրյալ հոգնակիակերտներին։ Այս հանգամանքը վկայում է բաղադրյալ հոգնակիակերտների արտահայտած քերականական իմաստների մթագնման մասին՝ *մարք* > *մարքիկ* > *մարքիկներ*, *կին* > *կրնանիք/կ* > *կրնանիք/կներ*, *զեղացի* > *զեղացիք/կ* > *զեղացիք/կներ*, *բանալի* > *բալնիք/կ* > *բալնըք/կներ*, *մադանի* > *մադանիք/կ* > *մադանըք/կներ*, *փղաք* > *փղդեք/կ* > *փղդեք/կներ*, *պասանա* > *պասանեք/կ* > *պասանեք/կներ*, *նասկի* > *նասկիք/կ* > *նասկիք/կներ*, *ագոս* > *ագոեք/կ* > *ագոեք/կներ*, *չուրք* > *չուրքիք/կ* > *չուրքիք/կներ*, *գել* > *գիլան* > *գիլաներ*, *էչ* > *իչան* > *իչվանք/կ* > *իչաներ* և այլն։

Ապարանի խոսվածքները, թեև պահպանել են նախկինում գործածած հոգնակիակերտների մեծամասնությունը, այդուհանդերձ Մշո բարբառին, Ալաշկերտի, Մանազկերտի և մյուս խոսվածքներին հատուկ -*դանք*, -*րունք*¹ մասնիկները, որպես հոգնակության ցուցիչներ, այլև գործածելի չեն ուսումնասիրվող խոսվածքներում. *դանք* ստացող բառերը ստանում են -*դիք*՝ *յրնգելք* > *յրնգերդանք* > *յրնգերդիք*, -*րունք* մասնիկը ստացողները՝ -*եր*՝ *դեղ* > *դեղրունք* > *դեղեր*։

Հոլովի քերականական կարգի առանձնահատկությունները Ապարանի խոսվածքներում։ Ապարանի խոսվածքներում տարբերակվում են ուղղական-հայցական, սեռական-տրական, բացառական, գործիական, ներգոյական հոլովները։ Թեք հոլովները ձևավորվում են համապատասխան վերջավորությունների՝ հոլովիչների ավելացմամբ կամ էլ՝ ներքին թեքմամբ։ Ուղղական հոլովը եզակի թվում վերջավորություն չունի, իսկ հոգնակի ուղղականը կազմվում է հոգնակիակերտ մասնիկների ավելացմամբ։ Դիտարկվող խոսվածքներում հայցական հոլովի՝ ձևաբանորեն ուղղական հոլովին մնանվելը ավարտված իրողություն է գրական հայերենի պես։ Ընդ որում, թե՛ ուղղական հոլովը, թե՛ որոշյալ առմամբ գործածված հայցական հոլովը հող են ստանում, իսկ Մշո բարբառին գրաբարից ավանդված գնախորի գործածությունը², որպես որոշյալության ձևաբանական կցադիր ցուցիչ, Ապարանի խոսվածքներում չի վկայվում։ Միայն Վարդենուտի և Եղիպատրուշի խոսվածքներում կան գ- նախորի գործածության դեպքեր՝ *հասանք ըզդար, նայեր գիս, մեռավ գիներ*։ Եզակի թվում սեռական հոլովը կազմվում է բառի ելակետային ձևին ավելացնելով համապատասխան մասնիկ, որով էլ որոշվում է տվյալ բառի որևէ հոլովման պատկանելը, իսկ տրական հոլովը անորոշ առման դեպքում մնան է

¹ Ըստ Ս. Ղազարյանի՝ -սպան հոգնակիակերտը կազմված է հոգնակիություն ցույց տվող ս, տ և ան ածանցներից (տե՛ս Ս. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 247)։

² Տե՛ս Ք. Մաղաթյան, Ալաշկերտի խոսվածքը, Եր., 1985, էջ 70, Ս. Հ. Բաղդասարյան-Թափալցյան, նշվ. աշխ., էջ 75։

³ Տե՛ս Ս. Հ. Բաղդասարյան-Թափալցյան, նշվ. աշխ., էջ 80։

սեռականին՝ որոշյալ առման դեպքում ստանալով -ն հոդը, թեև այս երկու հոլովների ձևաբանորեն նույնացումը նույնպես հայերենի զարգացման ներքին օրինաչափություններով ավարտված իրողություն է: Բացառական հոլովը եզակի թվում բազմաձև է. ունի -ից, -ուց, -է, -ա, -ու վերջավորությունները: Գործածության հաճախականության տեսանկյունից առաջատար է -ից մասնիկը: -ի վերջնահանչյուն ունեցող բառերը, այդ թվում ներքին թեքման որոշ բառեր, ինչպես զրական հայերենում է, Ապարանի խոսվածքներում ևս բացառական հոլովի համար ստանում են -ուց մասնիկը՝ *փարի>փարուց, չվի>չվուց, մօր>մօրուց, հօր>հօրուց, փան>փրնուց* և այլն: *Ամօր* բառի բացառականը խոսվածքակիրները կազմում են -ու մասնիկով՝ *ամօրու ջիմցա ինչ էնէ*: Շենավանի, Ափնայի, Արագածի, Հարթավանի, Ապարանի, Չորագլխի խոսվածքներում սակավաթիվ բառեր դեռևս պահպանել են բացառական հոլովի զրաբարյան -է հոլովակերտը, որը հաճախ, ստանալով -ն հոդը, ձևավորում է -էն բացառականակերտը: -էն մասնիկը, որը գործածության մեծ ընդգրկում է ձեռք բերում միջին հայերենում, ավելի կենսունակ է խոսվածքներում՝ *բաղրէ գիրքաս>բաղրաքից ես գալիս, գացեր ի չօլէն մաստր բաղէլու>զնացել էի դաշտից մաստր հավաքելու, դրսէն նօր էգա>դրսից նոր եկա, փրնէն դուս չէլի>փրնից դուրս չի գալիս, մաչնէն բան կէղի>մածունից բան է լինում, սաբախաբնէ գուկան ու փէղ չին խասնի>առավոտից գալիս են ու փէղ չեն հասնում* և այլն: Լեզվական օրինակներում բերվող փոխառյալ չօլ և սաբախաբան բառերից կարելի է եզրակացնել, որ -էն մասնիկը տարածվում է նաև ժողովրդախոսակցական լեզվի միջոցով հայերենին անցած ուշ շրջանի փոխառությունների վրա: -է հոլովակերտի գործածությունը համակարգային է հատկապես դերանունների պարագայում, բարբառախոսները հարազատորեն պահպանել են միջինհայերենյան ձևերը՝ *ընչքնէ, բէգնէ, մէգնէ, չէգնէ, յրմնէ* և այլն: Ուսումնասիրվող խոսվածքներում օրինաչափ իրողություն է այն, որ գրեթե բոլոր տեղանունները բացառական հոլովի իմաստն արտահայտում են -ա մասնիկի միջոցով: Բացառական հոլովի այս մասնիկը նույնանում է խոսվածքներում ա արտաքին հոլովման ենթարկվող բառերի սեռական հոլովի -ա վերջավորության հետ՝ *Յաչարազա խասու իմ բերէ>Աչարակից հարս են բերել, Նիզավանա լուր չրկա>Նիզավանից լուր չկա, Քուչազա սրտուտ կառօլ էմ առէ>Քուչակից սարտուտ կարօրնիլ էմ զնեյ, Բլխէրա ա էգաչ>Բլխէրից են եկել* և այլն: Բացառական հոլովի վերաբերյալ կազմություններում, ինչպես նկատելի է, պահպանվել է դասական հայերենի բացառական հոլովի կազմության առանձնահատկությունը⁷, միայն ի նախդիրն է ընկել՝ *ի Աբարանա* կառույցը դարձել է *Աբարանա*: Եզակի և հոգնակի թվերում գործիական հոլովը արտաքին թեքման դեպքում ստանում է -ով, իսկ ներքին թեքման դեպքում՝ -բ հոլովակերտները: Տարածաշրջանի բոլոր խոսվածքներում ներգոյական հոլովի -ում վերջավորությունը զրական լեզվի ներգործությամբ սկսում է գործառվել, աստիճանաբար համակարգայնանում է: Սակայն խոսվածքներում ներգոյական հոլովի արտահայտման երկու հիմնական սկզբունք կա. ա) *սեռական հոլովի և մեջ կապով* արտահայտելը՝ *գէղի մէջ, խօրու մէջ, փան մէջ, չօրու մէջ, բալլի մէջ* և այլն: Ներգոյական հոլովի իմաստի այսօրինակ արտահայտումը տիպական է կը ճյուղի բոլոր բարբառներին, և լեզվական այս կադապարը իրացվում է նաև արևելյան խմբակցության բարբառներում, բ) *ուղղական-հայցական* հոլովներով արտահայտելը, ուր կարելի է տարրորշել միայն նախադասության բնույթից՝ *մացեր ի դաշտը>մնացել էի դաշտում, նըժեր գէղըն կը լօղզրնան>երեխաները գեպում*

⁷ Տե՛ս Ա. Արրահամյան, նշվ. աշխ., էջ 24-25:

լողանում են, սարն ցուող ա, ըդու խամար էլ լա չընկ գացէ՝ սարում ցուրտ է, դրա համար էլ դեռ չենք գնացել, բրդիզն լիք պանիր կա՞ բրդիկում լիքը պանիր կա, Յէրեվան կրոիվ ա չընգէ՝ Երևանում կոիվ է ընկել, ջուրն լից վեղոսն՝ ջուրը լցրու՛ դույլի մեջ, անասներ ջառթըվան դաշտըն ծառվե՛ն՝ անասունները դաշտում ծառավից սարկեցին և այլն:

Ապարանի տարածքային միավորներում տարբերակվում են **ի, ու, ա** արտաքին և ներքին **ան, վա, օջ, օ, ց** հոլովումները: Մեր կատարած հետազոտությունները նույնպես վկայում են, որ ընդհանրական ի հոլովման են ենթարկվում հոլովվող բառերի մեծամասնությունը: Ի հոլովումն այնքան է տարածված, որ այլ հոլովումների պատկանող բառերը զուգահեռ ենթարկվում են նաև ի հոլովման: Խոսվածքների մեծ մասում՝ **Շենավանում, Նորաշենում, Երնջատափում, Ապարանում, Վարդենիսում** և այլն, գոյականի հոգնակի թիվը ենթարկվում է ի հոլովման՝ **դաշտերի, գեղերի, բուսրների, աղջրկների, սարերի** և այլն: Այս երևույթը կարելի է պատճառաբանել գրական լեզվի ազդեցությամբ, քանի որ հայերենի բարբառների կը ճյուղին պատկանող այդ խոսվածքների հոգնակի թիվը պետք է ենթարկվեր **-ու** հոլովման:

Ապարանի խոսվածքներում գործուն է **ու** հոլովումը: Այս հոլովման պատկանող բառերը կարելի ենթարկել հետևյալ խմբավորման.

ա) Ի վերջնահնչյուն ունեցող բառեր՝ **բեռի՝ բեռու, քամի՝ քամու, փարի՝ փարու, չի՝ չիու, հօրի՝ հ/խօրու** և այլն:

բ) Բազմաթիվ կենդանանունների՝ **գրոպան՝ գրոպրնու, հավ՝ հավու, աղվե՝ աղվրու, խօզ՝ խօզու, կափու՝ կաղվու, գառ՝ գառու, կօվ՝ կօվու, արջ՝ առջճու, էշ՝ իշու, գամէշ՝ գամշու, խոչ՝ խօջճու, ուլ՝ ուլու, վառեկ/զ՝ վառզու, գէլ՝ գիլու, էջ՝ իջու** և այլն:

գ) Արյունակցական հարաբերություններ արտահայտող բառեր՝ **մամ՝ մամու, պաք՝ պաքու, փաղ՝ փաղու, էրեխա՝ էրեխու, միժ՝ մըժու** և այլն:

դ) Տեղ ցույց տվող բառեր՝ **ջօր՝ ջօրու, գօմ՝ գօմու, ծօվ՝ ծօվու, չօր՝ չօրու, գուռ՝ գրու** և այլն:

ե) Ժամանակի իմաստ արտահայտող բառեր՝ **ժամ՝ ժամու, շաբաթ՝ շապթ/փու, ամիս՝ ամսու, լուս՝ լուսու** և այլն:

զ) Ձևաիմաստային տարբերակում չունեցող բառային միավորներ՝ **լուջ՝ լըջու, աման՝ ամնու, արև՝ արևու, ջուր՝ ջըրու, գլուխ՝ գլխու, պառավ՝ պառվու, ծուխ՝ ծխու, շօկ՝ շօկու, խամ՝ խամու** և այլն:

Խոսվածքների մի մասում՝ **Ափնայում, Արայիում, Արագածում, Սարալանջում, Հարթավանում**, որոնցում ապրող բարբառախոսները Մշո բարբառի ու նրա խոսվածքների ժառանգորդներն են, հոգնակի թիվը ենթարկում են **ու** հոլովման՝ **դաշտերու, գեղերու, բուսրների, աղջրկների, սարերու, բեռների, գիլանու** և այլն: Որոշյալ **ամեն** դերանունը և **Աստված** հատուկ գոյականը նույնպես ենթարկվում են **ու** հոլովման՝ **յրմե՛ն՝ յրմնու, Աստրվաջ՝ Աստրջու/ Ասու: Ու** հոլովման այսպիսի դրսևորումները հայերենի զարգացման ներքին օրինաչափություններով հիմնավորելի են: Դեռևս դասական հայերենում բազմաթիվ կենդանանուններ ենթարկվում էին այս հոլովման, որոնք մինչ օրս, ըստ էության, պահպանել են **ու** հոլովիչով հոլովվելը: Մյուս կողմից՝ **ու** հոլովումը ավելի մեծ գործածություն է ստանում միջին հայերենում, և Ապարանի խոսվածքներում իրացվող վերաբերյալ ձևերը միջինհայերենյան կառույցներ են, ընդ որում՝ շատերը ո հոլովման ոյ՞ու հնչյունափոխության արդյունք են՝ **գլուխ՝ գլխօ՞ր գլխու, դաշտեր՝ դաշտերօ՞ր դաշտերու:**

՝ Տե՛ս Մ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 251:

Ուսումնասիրվող խոսվածքներում ա արտաքին թեքման են պատկանում հետևյալ բառային խմբերը՝

ա) Հայկական, պարսկական, քուրքական ծագում ունեցող տեղանուններ՝ *Աբարան*>*Աբարանա*, *Յաշտարագ*>*Յաշտարագա*, *Նիգավան*>*Նիգավանա*, *Էջմիածին*>*Էջմիածնա*, *Քուչակ*>*Քուչակա*, *Ըոուսաստան*>*Ըոուսաստանա*, *Ղազնաֆար*>*Ղազնաֆարա*, *Քազառոչուի*>*Քազառոչուիա*, *Քլիտր*>*Քրլիտրա*, *Քյուրագան*>*Քյուրագանա* և այլն:

բ) Ազգակցական հարաբերություններ արտահայտող հետևյալ բառերը՝ *աղջիկ*>*աղջրկա*, *կրնիգ*>*կրնգա*, *պապիկ*>*պապկա*, *տատիկ*>*տատկա*։

գ) Հունկար, փեկրվար, մարտ ամսանունները՝ *հունկարա*/*հունրվարա*, *փեկրվարա*, *մարտա*։

դ) Չևախմաստային տարբերակում չունեցող բազմաթիվ բառեր՝ *թունդիր*>*թունդրրա*, *մանգադ*>*մանգրդա*, *հորթիկ*>*հորթրկգա*, *քուռագ*>*քուռգա*, *մաշուն*>*մաշնա*, *յաշկ*>*յաշկա* և այլն:

Խոսվածքներում ա ներքին թեքմամբ հղովվում են սակավաթիվ բառեր՝ *տուն*>*տան*, *չուն*>*չան*, *սյուն*>*սուն*>*սան*, *չյուն*>*չուն*>*չան*։ Վերջին երկու բառերը հղովվում են նաև ի հղովմամբ՝ *սունի*, *չունի*։

Ապարանի խոսվածքներում վա հղովման ենթարկվող բառերը ստորաբաժանվում են երկու խմբի՝

ա) Ժամանակային բովանդակություն ունեցող բառեր, որոնք հավասարաչափ ենթարկվում են նաև ու հղովման՝ *ժամ*>*ժամվա*/*ժամու*, *շաբաթ*>*շափթրվա*/*շափթրու*, *ամիս*>*ամսրվա*/*ամսու*, *տարի*>*տարվա*/*տարու*, *գաի*>*գաիվա*/*գաիու*, *յառավոտ*>*յառավոտվա*, *գաղիգ*>*գաղգրվա* և այլն։ Այսպես են հղովվում նաև գոյականաբար գործածված, ժամանակային իմաստ արտահայտող հետևյալ մակբայները՝ *չուր*>*չուրվա*, *յավաթ*>*յավաթվա* («առաջվա»), *մըզլոր*>*մըզլորվա*, *մըգա*>*մըգավա*։

բ) Որոշ տեղանուններ՝ *Շաշլու*>*Շաշլրվա*, *Մուլքի*>*Մուլքրվա*, *Թարառլու*>*Թարառլրվա*, *Յուշի*>*Յուշվա*։ Վա հղովման են պատկանում շաբաթվա օրանունները, ինչպես նաև գարունք, աշունք, ամառ, ձմեռ տարվա եղանակների անունները։ Օրինաչափ է այս բառամիավորների ան հղովման պատկանելը, սակայն այս դեպքում *գարունք*, *աշունք* բառերը կորցնում են բառավերջյան *ք* բաղաձայնը։

Ոջ հղովումը Ապարանի խոսվածքներում նույնպես իմաստային հղովում է, քանի որ, ինչպես պատմականորեն գրական հայերենին է ավանդվել, այս հղովման են պատկանում ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերը՝ *քուր*>*քրոջ*/*կիսուր*>*կիսրոջ*/*կեսար*>*կեսրոջ*/*տեղր*/*տեղրոջ*/*յրնգեր*>*յրնգերոջ*/*տավ*>*տավոջ*/*տեր*>*տիրոջ*/*աներ*>*աներոջ*, որոնք զուգահեռ ենթարկվում են նաև ի, ու և ուսումնասիրվող խոսվածքներում առանձնացվող *օ* հղովումներին՝ *քուր*>*քրվոր*, *տեք*>*տեքոր*, *կիսուր*>*կիսուրի*, *կեսար*>*կեսարի*, *աներ*>*աների*, *տեր*>*տիրու*։ *Ոջ* հղովման ենթարկվող բառերը, բաղադրության վերջնաձևեր դառնալով, դարձյալ մնում են *ոջ* հղովման։ Խոսվածքներում *կեսար* բառը ունի նաև *ե* ներքին թեքում՝ *կեսրեր* («*կեսրեր տնեն լուր չրկա*»)։ *Քավոր* բառը հղովվում է *և՛ ի*, *և՛ ոջ* հղովիչներով՝ *քավորի/օջ* («*քավորի/օջ բաժինը տարեր են*»)։ Ապարանի խոսվածքներում կենսունակ *օ* հղովմանը, բացի վերոբերյալ *քուր* և *տեք* բառերից, պատկանում են նաև արյունակցական հարաբերություններ արտահայտող *հեր*, *մեր*, *ախպեր* բառերը՝ *հոր*, *մոր*, *ախպոր*, որոնց ներքին թեքման այսօրինակ համակարգվածությունը պատմականորեն ավանդված իրողություն է։

Դասական հայերենում այս բառերը, որպես անկանոնություններ, ենթարկվում էին օ ներքին հոլովման՝ արտահայտվելով աւ երկբարբառով՝ *հայր* > *հայր* > *հոր*: Մուշ տեղանունը ենթարկվում է օ հոլովման՝ *Մըջօ*, չնայած բարբառախոսները գործածում են ու հոլովմամբ տարբերակը նույնպես՝ *Մըջու*:

Ապարանի տարածքային տարբերակներում առանձնացվող ան հոլովման պատկանող բառերը հիմնականում հոլովվում են ի, մասամբ՝ ու հոլովիչներով՝ *գառ* > *գառան/գառի*, *շուրք* > *շըրքան/շըրքի*, *յեզ* > *յեզան/յեզի*, *չեռ* > *չեռան/չեռի*, *սերձ* > *սերձան/սերձի*, *դուռ* > *դըռան/դըռնի*, *փուռ* > *փոռան/փոռի*, *բուռ* > *բըռան/բըռի/բըռու*, *փեշ* > *փեշան/փեշի/փեշու* և այլն: Հավաքականություն արտահայտող *-օնք*, *-ենք* կազմություն ունեցող բառերը խոսվածքներում ենթարկվում են ց հոլովման՝ *մեռօնք* > *մեռօնց/ծ*, *Մտըօպենք/կ* > *Մտըօպենց/ծ*, *Վազգենք/կ* > *Վազգենց/ծ* և այլն:

Ապարանի տարածքային միավորները վերոնշյալ դրսևորումներին զուգահեռ ի հայտ են բերում այլ առանձնահատկություններ ևս: Օրինակ՝ *-ցի* վերջածանց ունեցող գոյականները եզակի թվում ենթարկվում են ու հոլովման, իսկ հոգնակիում ստանալով *-ք* հոգնակիակերտը՝ թեք հոլովներում ունենում են *-օց* վերջավորությունը՝ *քուշակցի* > *քուշակցօց*, *երևանցի* > *երևանցօց*, *դարաբաղցի* > *դարաբաղցօց*, *քաղաքացի* > *քաղաքցօց* և այլն: Այսպես են հոլովվում նաև *կնիք*, *քուր*, *սխալք* բառերը հոգնակի թվի թեք հոլովներում՝ *կընկըրօց*, *կնանօց*, նաև՝ *կընկաց* («*կընկըրօց*, *կնանօց խեղ փեխ չեքանք*»), *քըրվըրօց* («*քու քուրվըրօց անվընըր ի՞նճ ա*»), *սխալըրօց* («*մեր խորօխալըրօց անընին մեռնիմ*»): Բարբառախոսները այս հարցում, ըստ էության, պահպանել են գրաբարյան ո պարզ հոլովման առանձնահատկությունները, քանի որ դասական հայերենում *-ցի* ածանց ունեցող բառերը ենթարկվում են ո արտաքին պարզ հոլովման⁹: Սակայն Ապարանի խոսվածքներում *-օց* մասնիկը արդեն աստիճանաբար կորցնում է իր քերականական իմաստը, քանի որ բացառական և գործիական հոլովների *-ից* և *-օվ* վերջավորությունները ավելանում են *-օց* մասնիկին՝ *քաղաքցօցից/օվ*, *քուրվըրցօցից/օվ*: Օ վերջնահնչյուն ունեցող բազմաթիվ անձնանուններ և այնպիսիք, որոնք հնչյունների անկման օրենքով կորցրել են բառավերջի ոլոշ հնչյուններ ու հնչյունակապակցություններ, գրական հայերենում ենթարկվում են ի հոլովման, իսկ Ապարանի խոսվածքներում *-ի* հոլովակերտի փոխարեն ստանում են *-յ* ձայնորդը, և, կարելի է ասել, *յ* ձայնորդն է ստանձնում հոլովակերտի պաշտոնը՝ *Կարօ* > *Կարօյ փուն*, *Սարօ* > *Սարօյ ախիկ*, *Սարենիկ* > *Սարօ* > *Սարօյ մառք*, *Մարօ* > *Մարօյ բօսպան*, *Թագուհի* > *Թէգօ* > *Թէգօյ բօնէր* և այլն: Ալաշկերտի խոսվածքը հետազոտած Ք. Մադաթյանը նկատում է, որ այս անձնանունները պատկանում են ի հոլովման, սակայն շեշտը մնում է արմատական ձայնավորի վրա, ի հոլովիչը թույլ է արտասանվում և հնչյունափոխությամբ դառնում է *յ*¹⁰: Սակայն պետք է նշել, որ այս սկզբունքով հոլովական իմաստ արտահայտելը հայերենում նոր իրողություն չէ: Դասական հայերենում բազմաթիվ փոխառյալ անձնանուններ և տեղանուններ՝ *Աննա*, *Յուդա*, *Ասիա*, *Կեսարիա* և այլն, սեռական, տրական, բացառական հոլովները կազմելիս ստանում են չարտասանվող *յ*¹¹, որն էլ կատարում է այդ հոլովների կերտման ձևաբանական ցուցիչ դերը, ուստի չի բացառվում, որ գրաբարի հոլովական սույն յուրահատկությունը գործել է նաև կենտրոնական Հայաստանի բարբառներում, որոնց ներկայացուցիչներից են

⁹ Տե՛ս Ա. Արրահամյան, նշվ. աշխ., էջ 44:
¹⁰ Տե՛ս Ք. Մադաթյան, նշվ. աշխ., էջ 75:
¹¹ Տե՛ս Ա. Արրահամյան, նշվ. աշխ., էջ 30:

նակ ապարանցիները: Խոսվածքներում գործածվում են նաև գրաբարյան քարացած հուլվական կազմություններ՝ *քօ շեռաց խացըն չուղվի, իմ քևաց վըրսա յրև գավ, օղաց ցավէն չըմ կրոնա քէլէ* և այլն:

Առկայացման քերականական կարգի առանձնահատկությունները Ապարանի խոսվածքներում: Ապարանի տարածքային միավորներում ևս *-ն*, *-ը* մասնիկները որոշյալ հուղեր են: Չայնավորով վերջացող բառերը ստանում են *-ն՝ չու՝ շուն, փարի՝ փարին*: Խոսվածքներում այն բառերը, որոնք բառավերջում ունեն *ա* ձայնավոր, *ն* հոդից առաջ հնչյունափոխվում են է-ի՝ *փղս՝ փղէն, փարս՝ փարէն, շըլակս՝ շըլակէն, էրէխս՝ էրէխէն, փեսս՝ փեսէն* և այլն: Բաղաձայնով վերջացող բառերը ստանում են *-ը* հոդ՝ *փուն՝ փունը, գէր՝ գէրը*: Չնայած սույն կանոնին՝ խոսվածքներում տարածված է այն, որ *-ն* հոդը շատ հաճախ ավելանում է արդեն *-ը* հոդ ստացած բառերին՝ *քար՝ քարը՝ քարըն, մար՝ մարը՝ մարըն, շեռ՝ շեռը՝ շեռըն* և այլն: Ապարանի տարածաշրջանում ապրող բարբառախոսների կողմից հոդի այսօրինակ գործածությունը կարող է վկայել, որ *-ը* հոդը հնչույթաբանորեն եղել է հայերենի զարգացման ավելի վաղ շրջաններում՝ ձևաբանորեն չարտահայտվելով: Ապարանի խոսվածքներում ստացական հոդը *-ս*, *-դ/տ*, *-ն* մասնիկներով է արտահայտվում, սակայն Մշո բարբառով, Ալաշկերտի, Մանազկերտի խոսվածքներով խոսող բարբառախոսները ստացական *-ս*, *-դ/տ* հոդին ավելացնում են *-ի* մասնիկը՝ *օրղներ՝ իմ օրղներ՝ օրղներս՝ օրղներսի, մար՝ իմ մարըն՝ մարս՝ մարսի, գլօխ՝ իմ գլօխն՝ գլօխս՝ գլօխսի, ցավ՝ քօ ցավը՝ ցավըդ/ց՝ ցավըդ/ցի, մրոութ/ց՝ իմ մրոութ/ցն՝ մրոութ/ցս՝ մրոութսի, մէջք՝ քօ մէջքը՝ մէջքըդ՝ մէջքըդ/ցի, քուշ՝ քօ քուշը՝ քուշդ/ց՝ քններդ/ցի* և այլն: Տարածված գործածություն է բառերի՝ ոչ միայն ստացական հոդեր, այլև ստացական դերանուններ ստանալը՝ *իմ քուրսի, քու հասսպի, մեր փավարսի, շեր քավօրցի* և այլն: Բարբառագետ Ս. Հ. Բաղդասարյան-Թափալցյանը ստացական *-ի* մասնիկը համարում է աճական¹², բայց, ըստ մեզ, *-ի* մասնիկը *ես* դերանվան սեռական հոլովի, պատկանելություն արտահայտող *իմ* բառածևի *ի* արմատահնչյունն է և, հավանաբար, ստացականություն իմաստը սաստկացնելու համար դրվում է բառի վերջում: Քննարկվող խոսվածքներում դիմորշ են *-ս*, *-դ*, *-ն* հոդերը, իսկ *-ն*-ն ցուցական հոդի կիրառություն ունի՝ արտահայտելով ցուցական դերանունների նշանակությունը՝ *կնիգըն՝ այս կնիգը՝ այն կնիգը՝ այդ կնիգը* և այլն: Բոլոր խոսվածքներում, որպես անորշ հոդ, հանդես է գալիս *մէ/մը* ձևույթը՝ որոշակիացնելով գոյականի ընդհանուր իմաստը՝ *մէ բան, մէ գօռք, մէ խապ, մը ճար, մը խօսք/կ* և այլն: Խոսվածքներում հանդիպում են կիրառությունների, համաձայն որոնց՝ բացառական հուլովը *-ը* հոդ է ստանում՝ *չուրի յասուց փուն, քեռնիցը քեռէց, ախճըզա մառթիցը մէ լուր չոկա* և այլն:

Ամփոփելով Ապարանի խոսվածքներում գոյականի քերականական կարգերի դրսևորումներին նվիրված քննությունը՝ կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

ա) Ապարանի խոսվածքներում գործում են *-էր*, *-ներ*, *-ք*, *-իկ*, *-իք* պարզ և *-էք*, *-էրք*, *-ց/դիք*, *-վդիք*, *-անք*, *-վըղանք/կ*, *-բան*, *-անք*, *-վներ*, *-սպան*, *-փան* բաղադրյալ հոգնակիակերտները: *-Ք*, *-իկ*, *-ան* մասնիկները ավանդել են դասական հայերենից, *-էր*, *-ներ*, *ց/դիք*, *-սպան* մասնիկները՝ միջին հայերենից, մնացալը կենտրոնական Հայաստանի բարբառներում ձևավորված բաղադրյալ մասնիկներ են, իսկ *չազ* բառի համար կիրառված *-փան* հոգնակիակերտը, ամենայն հավանականությամբ, նոր ձևավորված հոգնակիակերտ է, քանի որ գրավոր աղբյուրներում

¹² Տե՛ս Ս. Հ. Բաղդասարյան-Թափալցյան, նշվ. աշխ., էջ 102:

որևէ վկայություն չկա այդ մասին: Այդուհանդերձ, նկատելի է աստիճանաբար բաղադրյալ հոգնակիակերտների վերացումը և **-եր, -ներ** մասնիկների համատարած գործածությունը:

բ) Ապարանի խոսվածքներում հոլովի քերականական կարգն իր առանձնահատկություններով չի տարբերվում գրական հայերենի նույն քերականական կարգից: Խոսվածքների համար առանձնացվում է ուղղական-հայցական, սեռական-տրական, բացառական, գործիական հոլովները: Բարբառախոսները դադարել են գործածել որոշյալ հայցականի համար **զ-** նախդիրը, որը բնորոշ հատկանիշ է այդ տարածաշրջանում հանգրվանած բարբառների համար: Բացառական հոլովը բազմաձև է և պահպանել է դասական հայերենում ունեցած վերջավորությունների առատությունը: Գործիական հոլովի ձևաբանական ցուցիչները չեն տարբերվում գրական լեզվում չափակարգված ձևերից, իսկ ներգոյականի **-ում** մասնիկը արևելյան խմբակցության բարբառների միջնորդությամբ աստիճանաբար տարածվում է: Սակայն առայժմ ճիշտ չի լինի Ապարանի խոսվածքների համար **-ում** մասնիկով ներգոյական հոլով բնութանելը, քանի որ նրա իմաստը հիմնականում արտահայտվում է **սեռական հոլով+ մէջ կասյ** կաղապարի և **ուղղական-հայցական** հոլովների միջոցով: Հոլովման համակարգի քննությունը ցույց տվեց, որ Ապարանի խոսվածքներում, ի տարբերություն գրական հայերենի, հոլովման համակարգը դեռևս կանոնավորված չէ, բազմաձև է: Բառային միավորները ոչ միայն պահպանել են հոլովման հարագատ, նախնական ձևերը, այլև ենթարկվում են մեկից ավելի հոլովումների: Բարբառախոսներն ավանդույթի ուժով ու հարագատ մնալով իրենց լեզվական ակունքներին՝ պահպանում են բարբառային տիպիկ, հարագատ ձևեր: Ապարանի տարածքային միավորներում տարբերակվում են **ի, ու, ա** արտաքին և ներքին **ան, վա, օջ, օ, ց** հոլովումները: Անհերքելի է, որ հայերենի զարգացման ներքին օրինաչափություններով **ի** բնդհանրական հոլովումը հաղթահարված, անվիճարկելի իրողություն է մասնադարձիկ խոսվածքներում:

դ) Ապարանի խոսվածքներում համակարգային է որոշյալ **-ն, -ը** հոդերի գործածությունը: Գրական հայերենից, որպես տարբերակիչ հատկանիշ, նշելի է, որ **-ն** հոդն ավելանում է նաև **-ը** հոդ ստացած բառերին: Ապարանի խոսվածքներում ստացական հոդը **-ս, -դ/տ, -ն** մասնիկներով է արտահայտվում, միայն այն տարբերությամբ, որ որոշ խոսվածքներ ստացական **-ս, -դ/տ** հոդին ավելացնում են ստացականության իմաստը սաստկացնող **-ի** մասնիկը: Քննարկվող խոսվածքներում դիմորոշ են **-ս, -դ, -ն**, ցուցական՝ **-ն** հոդերը: Բոլոր խոսվածքներում, որպես անորոշ հոդ, հանդես է գալիս մե/մը ձևային:

Г. Г. МКРТЧЯН — Грамматические особенности имени существительного в апаранских говорах. — По наблюдениям автора статьи, несмотря на воздействие литературного армянского на разговорную речь, в апаранских говорах сохраняются множественные искажения языка. Отмечается, что в числе, падеже и в использовании грамматических правил уже есть тенденция постепенного восстановления нормы и только время покажет, как разовьется этот процесс.